# ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վեհափառ,—կոչում է դա, աստիճան, իշխանություն թե պաշտոն, միևնույն է, հայոց մտապատկերում արտահայտում է իբրև բարձրագույն կարգ, կատարելություն, անքննին ու անհաս:

Կաթողիկոս ընտրում են: Կաթողիկոս է, որովհետև առավել ձայն է ստացել: Ուրեմն կարող էր և ուրիշը լինել: Բայց հայոց մտապատկերում չկա ուրիշ: Կաթողիկոս նա է, որ է: Ուրիշը չէր կարող, և եթե ուրիշը լիներ, ուրեմն տեղի է ունեցել բռնատիրություն՝ ուզուրպացիա:

Բարձրագույն օծյալի նկատմամբ այդ պատկերացումը կույր հավատ չէ, այլ բարձրագույն վստահություն և նվիրում և զգաստ հավատ: Դա ազգային հայեցողություն է:

Հայ Եկեղեցին միակ հաստատությունն է, որ իր սկզբնավորումից՝ 4-րդ դարից, հարատևել է մեր պատմության մեջ առանց ընդհատման և առանց ընդմիջումի: «Հայոց աշխարհի թագավորությունը ծվեն-ծվեն եղավ, ինչպես մի հնացած ձորձ»,—ասում է 5-րդ դարի պատմիչը: Հետո ծվեններն էլ ծվենվեցին, ժողովուրդը ափվեց աշխարհով մեկ, սեփական երկրի անունը արտահայտվեց օտար որոշիչով. Պարսկահայաստան, Թուրքահայաստան, ապա նաև՝ Ռուսահայաստան: Թուրքահայաստանը հետո սկսեցին կոչել Պատմական Հայաստան, կամ՝ «Երկիր», որ հնչում է որպես կարոտ, կորցրած երազ: Իսկ ժողովուրդը, որ մեկ էր. մեկ ազգ և մեկ լեզու, կոտորակվեց հարյուր ու մեկ անվան. թուրքահայ, ֆրանսահայ, ամերիկահայ և նույնիսկ հայաստանահայ:

Եվ միակ տեղը, ուր հայը հայ է և Հայաստանը՝ Հայաստան իր ամբողջության մեջ, առանց հապավումի և առանց հավելման, Հայաստանյայց Եկեղեցին է, որ խորհրդավորում է ազգը: Դա նման է մայր մեղվի, որ իր շուրջն է հավաքում և պահպանում անփեթակ պարսը, և ինքն էլ մայր է:

Մայր Եկեղեցի:

Իսկ մայրը չի կարող սխալվել իր որդու ընտրության մեջ: Եվ մայրը չսխալվեց: Եկեղեցու գլուխ ընտրվեց լավագույնը՝ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ճիշտ է արդյոք հաշվված կաթողիկոսաշարը՝ 130, թե ոչ: Տասնյոթ դարերի մեջ թերևս մեկը սահել է ազգային հիշողությունից, կամ պատմությունը արժան չի համարել տալու մեկի անունը, կամ ասենք կաթողիկո՞ս էր Հովսեփ Վայոցձորեցին, թե տեղապահ, որ Վարդանի հետո առաջնորդեց հայոց աշխարհազորը Ավարայր և նահատակվեց ու սրբացավ, իսկ Հովսեփ Արղությանը, որ ընտրվեց, բայց չգահակալեց, մտնու՞մ է այդ շարքի մեջ, և արդյո՞ք 131-րդն է Գարեգին Ա-ն, դժվար է ասել: Բայց դա ժամանակագրական խնդիր է: Լուսավորչից հետո ով նստել է Լուսավորչի գահին, առաջինն է: Առաջինն է Հուսիկը իր խստակրոն և կամային վարքով, Ներսես Մեծը իր բացառիկ դերով իբրև Եկեղեցու վերանորոգիչ: «Թագավորն ու դա մի հաշվի են»,—ավանդում է նրա մասին պատմիչը: Լուսավորչից հետո առաջինն է Սահակ Պարթևը՝ հայոց դպրության մեծ սատարող, որ եղավ Թարգմանչաց հայր, Հովհան իմաստասեր Օձնեցին, որ կանոնակարգեց Եկեղեցին և մերժեց ամեն աղանդ և հերձված, Ներսես Կլայեցին, որի վրա Աստծո շնորհ էր իջած և որի համար կոչվեց Շնորհալի, առաջինն էր Ներսես Աշտարակեցին՝ մեծ դիվանագետ և մեծ քաղաքացի, ազգային նվիրյալ, Մկրտիչ Խրիմյանը, որ հայոց հայր էր և այդպես էլ կոչվեց՝ Խրիմյան Հայրիկ, Լուսավորչից հետո առաջինն էր Վազգեն Ա-ն՝ խաղաղաբարո, շինարար և սրբակյաց, որ իր ազնվությամբ կարող էր միայն իր հետ համեմատվել, և Գարեգին Ա-ն՝ մատենագետ, գիտնական, գրող, արվեստագետ և հռետոր, որ հենց առաջին օրից իր խոսքով առինքնեց ժողովրդին:

Լուսավորչից հետո:

Ասում են Արագածի չորս գագաթներին անպարան կախված է Լուսավորչի կանթեղը և վառվում է արցունքով, և նրա լույսը կարող են տեսնել միայն արդարները:

Թող և Գարեգին Ա-ի ժամանակ վառվի Լուսավորչի կանթեղը, բայց ոչ թե արցունքով, այլ ոգու ճառագայթմամբ, և թող նրա լույսը տեսնեն ոչ միայն արդարները, այլև մեղավորները և ավելի շատ՝ մեղավորները, որ արդարանան:

Ամեն:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ